Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-762-15.01.2024,22.02.2024-ԱՌՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» 2002 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-324 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) 5-րդ պարբերությունից հանել «: Ուղեղի մահը համարժեք է մարդու մահվան» բառերը.

2) 7-րդ պարբերությունը «մահվան փաստի հաստատումից հետո» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ կենսաբանական մահից հետո» բառերով.

3) 9-րդ պարբերությունում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ 9-րդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«կենսաբանական մահ՝ օրգանիզմի բոլոր հյուսվածքներում եւ բջիջներում կենսաբանական եւ ֆիզիոլոգիական գործունեության լրիվ եւ անդառնալի դադարում:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին պարբերությունում «Փոխպատվաստման ենթակա» բառերը փոխարինել «Կենդանի դոնորից վերցվող փոխպատվաստման ենթակա» բառերով.

2) 2-րդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Մարդու ուղեղային կամ կենսաբանական մահվան փաստը հաստատելուց հետո փոխպատվաստման նպատակով վերցվող օրգանների կամ հյուսվածքների ցանկերը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «մշակելու» բառից հետո լրացնել «, պահպանելու և տեղափոխելու» բառերը:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 1-ին պարբերությունում «համաձայնությամբ» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքով սահմանված բժշկական միջամտության համար համաձայնություն տալու կարգավորումների համաձայն» բառերը.

2) 3-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

3) 4-րդ պարբերությունից հանել «միայն բացառիկ դեպքերում,» և «, իսկ սույն օրենքով սահմանված կարգով համաձայնության ստացումն անհնար է» բառերը:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին պարբերությունում «հրաժարվել է» բառերը փոխարինել «ներկայացրել է իր անհամաձայնությունը՝» բառերով.

2) 2-րդ պարբերությունում «որոշման բացակայության դեպքում» բառերը փոխարինել «գրավոր անհամաձայնության բացակայության դեպքում» բառերով.

3) 4-րդ պարբերությունը «փաստաթղթերում» բառից հետո լրացնել «եւ մուտքագրվում էլեկտրոնային առողջապահական համակարգ» բառերով.

4) 5-րդ պարբերությունում «որոշման» բառը փոխարինել «գրավոր անհամաձայնության» բառերով.

5) 7-րդ պարբերությունը «այլ հարցերի շուրջ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ որպես դիակային դոնոր հանդես գալու անհամաձայնության իրավունքի, դիակային դոնորի ընտանիքի անդամների համաձայնություն տալու իրավունքի վերաբերյալ» բառերը:

Հոդված 6. Օրենքի 8-րդ հոդվածում «մարդու ուղեղային» բառերից հետո լրացնել «կամ կենսաբանական» բառերը:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) «քաղաքացի» բառերն իրենց հոլովաձեւերով փոխարինել «անձ» բառերով՝ իրենց համապատասխան հոլովաձեւերով.

2) 1-ին պարբերության «բ» եւ «գ» կետերն ուժը կորցրած ճանաչել.

3) 1-ին պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «է» կետով.

«է) անձը օրենքով սահմանված կարգով ճանաչված է անգործունակ:»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պարբերության «բ» կետում «վիրահատությունը» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ 1-ին պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «գ» կետով.

«գ) օրգանը կամ հյուսվածքը վերցնելուց հետո լիազոր մարմնի սահմանած կարգով գտնվել շարունակական (դիսպանսերային) հսկողության մեջ:»:

Հոդված 9. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս գործող «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է դեռևս 2002 թվականի ապրիլի 16-ին: Օրենքի ընդունումից հետո առողջապահության ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրական ակտերն ենթարկվել են բազմաթիվ էական փոփոխությունների: Օրենքով կարգավորվող իրավահարաբերությունների զգալի մասը ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունների արդյունքում կարգավորում է ստացել նաև ոլորտային այլ օրենքների շրջանակներում: Ուստի, Օրենքի և այլ ոլորտային օրենքների միջև համապատասխանությունն ապահովելու և փոխպատվաստման ոլորտում գործնականում առաջացած մի շարք խնդիրներ կարգավորելու նպատակով՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Նախագծով կատարվող փոփոխության շրջանակներում Օրենքում օգտագործվող հասկացություններում ուղեղի մահից բացի սահմանվում է նաև <u>կենսաբանական մահի</u> հասկացությունը, ինչն անհրաժեշտ է որոշ օրգանների կամ հյուսվածքների փոխպատվաստման դեպքում:

Բացի այդ, բացի օրենքով սահմանված կենդանի դոնորից վերցվող փոխպատվաստման ենթակա օրգաններից ցանկից, ՀՀ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին (այսուհետ՝ Լիազոր մարմին) տրվում է լիազորություն՝ սահմանելու <u>մարդու ուղեղային կամ կենսաբանական մահվան փաստն արձանագրելուց հետո փոխպատվաստման նպատակով վերցվող օրգանների ցանկը</u>:

Նախագծով վերանայվել են նաև փոխպատվաստման նպատակով համաձայնություն տված կենդանի դոնորի իրավունքները և ամրագրվել է, որ վերջինս իրավունք ունի օրգանը կամ հյուսվածքը վերցնելուց հետո լիազոր մարմնի սահմանած կարգով գտնվել շարունակական (դիսպանսերային) հսկողության մեջ: Դոնորի հիշյալ իրավունքի սահմանումը բխում է միջազգային փորձից, որի համաձայն՝ <u>կենդանի դոնորներին և ռեցիպիենտներին առաջարկվում է հետփոխպատվաստումային բժշկական օգնություն և սպասարկում</u>: Այս առումով հարկ է նշել, որ Լիազոր մարմնի սահմանած կարգով նախատեսվելու է դոնորի շարունակական (դիսպանսերային) հսկողության ապահովումը, որն իր մեջ ընդգրկելու է մասնագիտական խորհրդատվությունների ծավալները և դրանց անցկացման ժամկետները, անհրաժեշտ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծավալը և դրանց իրականացման պարբերականությունը՝ դոնորի լիարժեք հետվիրահատական բժշկական հսկողությունն ապահովելու նպատակով:

Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսվել են դրույթներ անձի՝ որպես դիակային դոնոր հանդես գալու անհամաձայնության իրավունքի և դիակային դոնորի ընտանիքի անդամների համաձայնության տրման իրավունքի վերաբերյալ՝ ուղղված բնակչության շրջանում այս իրավունքների իրազեկվածության բարձրացմանը:

Հաշվի առնելով, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի իմաստով փոխպատվաստումը ևս համարվում է բժշկական միջամտություն, կատարվել են համապատասխանեցումներ սույն օրենքով սահմանված դրույթների հետ:

Բացի այդ, նախագծում կատարվել են մի շարք այլ փոփոխություններ, որոնք բխում են այլ իրավական ակտերից, միջազգային նորմերից կամ ուղղված են փոխպատվաստման ոլորտում գործնականում առաջացած մի շարք խնդիրների կարգավորմանը: Նախագծի 11-րդ հոդվածից՝ կենդանի դոնորների ընտրության շրջանակից, հանվել է հաշմանդամություն ունեցող անձը, քանի որ Օրենքով սսահմանված սահմանափակումը հակասում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային: Բացի այդ, նախագծի նույն հոդվածով կատարված այլ փոփոխության համաձայն՝ անձի 65 տարին լրանալը այլևս արգելք չէ կենդանի դոնոր հանդես գալու համար:

3. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նախագծի ընդունմամբ օրենսդրական ամրագրում կստանա **կենսաբանական մահ հասկացությունը**, ինչպես նաև օրենսդրական հիմք կսահմանվի Լիազոր մարմնի կողմից մարդու ուղեղային կամ կենսաբանական մահվան փաստն արձանագրելուց հետո փոխպատվաստման նպատակով **վերցվող օրգանների ցանկը հաստատելու համար**: Նախագծի ընդունման արդյունքում օրենքով հստակ կնախատեսվեն դրույթներ նաև Լիազոր մարմնի կողմից բնակչության շրջանում իրականացվող տեղեկատվության տրամադրման մասին՝ որպես դիակային դոնոր հանդես գալու անհամաձայնության իրավունքի, դիակային դոնորի ընտանիքի անդամների համաձայնության տրման իրավունքի վերաբերյալ:

Նախագծի ընդունման ադյունքում կապահովվի նաև Օրենքի դրույթների համապատասխանեցումը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի և այլ իրավական ակտերին դրույթներին:

4. ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունմամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանա:

6. ԿԱՊԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 2050, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026ԹԹ. ԾՐԱԳԻՐ, ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՎ/ԿԱՄ ԱՅԼ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագիծը չի բխում ռազմավարական փաստաթղթերից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երկրորդ ընթերցում

Կ-762-15.01.2024,22.02.2024-ԱոՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» 2002 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-324 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) 5-րդ պարբերությունից հանել «: Ուղեղի մահը համարժեք է մարդու մահվան» բառերը.

2) 7-րդ պարբերությունը «մահվան փաստի հաստատումից հետո» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ կենսաբանական մահից հետո» բառերով.

3) 9-րդ պարբերությունում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ 9-րդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«կենսաբանական մահ՝ օրգանիզմի բոլոր հյուսվածքներում եւ բջիջներում կենսաբանական եւ ֆիզիոլոգիական գործունեության լրիվ եւ անդառնալի դադարում:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին պարբերությունում «Փոխպատվաստման ենթակա» բառերը փոխարինել «Կենդանի դոնորից վերցվող փոխպատվաստման ենթակա» բառերով.

2) 2-րդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Մարդու ուղեղային կամ կենսաբանական մահվան փաստը հաստատելուց հետո փոխպատվաստման նպատակով վերցվող օրգանների կամ հյուսվածքների ցանկերը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «մշակելու» բառից հետո լրացնել «, պահպանելու և տեղափոխելու» բառերը:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 1-ին պարբերությունում «համաձայնությամբ» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքով սահմանված բժշկական միջամտության համար համաձայնություն տալու կարգավորումների համաձայն» բառերը.

2) 3-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

3) 4-րդ պարբերությունից հանել «միայն բացառիկ դեպքերում,» և «, իսկ սույն օրենքով սահմանված կարգով համաձայնության ստացումն անհնար է» բառերը:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին պարբերությունում «հրաժարվել է» բառերը փոխարինել «ներկայացրել է իր անհամաձայնությունը՝» բառերով.

2) 2-րդ պարբերությունում «որոշման բացակայության դեպքում» բառերը փոխարինել «գրավոր անհամաձայնության բացակայության դեպքում» բառերով.

3) 4-րդ պարբերությունը «փաստաթղթերում» բառից հետո լրացնել «եւ մուտքագրվում էլեկտրոնային առողջապահական համակարգ» բառերով.

4) 5-րդ պարբերությունում «որոշման» բառը փոխարինել «գրավոր անհամաձայնության» բառերով.

5) 7-րդ պարբերությունը «այլ հարցերի շուրջ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ որպես դիակային դոնոր հանդես գալու անհամաձայնության իրավունքի, դիակային դոնորի ընտանիքի անդամների համաձայնություն տալու իրավունքի վերաբերյալ» բառերը:

Հոդված 6. Օրենքի 8-րդ հոդվածում «մարդու ուղեղային» բառերից հետո լրացնել «կամ կենսաբանական» բառերը:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) «քաղաքացի» բառերն իրենց հոլովաձեւերով փոխարինել «անձ» բառերով՝ իրենց համապատասխան հոլովաձեւերով.

2) 1-ին պարբերության «բ» եւ «գ» կետերն ուժը կորցրած ճանաչել.

3) 1-ին պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «է» կետով.

«է) անձը օրենքով սահմանված կարգով ճանաչված է անգործունակ:»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պարբերության «բ» կետում «վիրահատությունը» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ 1-ին պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «գ» կետով.

«գ) օրգանը կամ հյուսվածքը վերցնելուց հետո լիազոր մարմնի սահմանած կարգով գտնվել շարունակական (դիսպանսերային) հսկողության մեջ:»:

Հոդված 9. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Կ-762-15.01.2024,22.02.2024-ԱռՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	**3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետով նախատեսվում է Օրենքի 6-րդ հոդվածը 3-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել: Նշյալ դրույթի համաձայն՝ *Եթե ռեցիպիենտի 18 տարին չի լրացել, կամ նա օրենքով սահմանված կարգով ճանաչվել է հաշմանդամություն ունեցող անձ, ապա փոխպատվաստումն իրականացվում է նրա ծնողների կամ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ,* իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *առանց ռեցիպիենտի, նրա ծնողների կամ նրա շահերի օրինական ներկայացուցչի համաձայնության ռեցիպիենտին փոխպատվաստումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, երբ փոխպատվաստման հետաձգումը* ***սպառնում է ռեցիպիենտի կյանքին***: Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն հիշյալ փոփոխության նպատակը Օրենքով նախատեսված դրույթների համապատասխանեցումն է «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքի դրույթներին, (համապատասխան իրավահարաբերություններն արդեն իսկ կարգավորված են հիշյալ օրենքով): Նշվածի համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ իրավակարգավորումներին. Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-	Ընդունվել է:	Ընդունվել է:

			րդ մասի համաձայն՝ *16 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտի բժշկական միջամտության համար գրավոր համաձայնությունը տալիս է նրա օրինական ներկայացուցիչը, եթե բացակայում են նույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանները: Սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում* ***հաշվի է առնվում 16 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտի կարծիքը****,* իսկ 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի, երեխայի (պացիենտի) վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները տրամադրվում են նրան, եթե միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.*(…): Այսինքն նախատեսված պայմանների առկայության դեպքում 16 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտի կարծիքը հաշվի է առնվում: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *16 տարին լրացած երեխաները իրավունք ունեն տալու* ***գրավոր իրազեկված համաձայնություն*** *բժշկական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:* Նշված իրավանորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքով մի դեպքում սահմանվում է 16 տարին չլրացած, իսկ մյուս դեպքում 16 տարին լրացած անձանց **բժշկական միջամտության համար գրավոր համաձայնության և վերջիններիս կարծիքը հաշվի առնելու** հետ կապված դրույթներ, այն պարագայում, երբ Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով, փոխպատվաստման համար ռեցիպիենտի ծնողի կամ օրինական ներկայացուցչի **համաձայնությունը պարտադիր է** (բացառությամբ, երբ փոխպատվաստման հետաձգումն սպառնում է ռեցիպիենտի կյանքին), ուստի վերոնշյալ դրույթների փոխադարձ կապը ընդգծելու, ինչպես նաև իրավական նորմերի որոշակիությունը ապահովելու և տարաբնույթ ընկալումներից խուսափելու նպատակով,		

			առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսել «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» **օրենքի կամ դրա առանձին դրույթներին կատարվող հղումներ՝** նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջները: Ինչպես նաև առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածը խմբագրելուց հաշվի առնել այն, որ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքի 24-րդ հոդվածով սահմանված են առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության բժշկական օգնություն և սպասարկում իրականացման դեպքերը, որոնց մեջ ներառված է նաև մարդու կյանքին սպառնացող վտանգի դեպքը՝ Կառավարության սահմանած կարգով: ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 264-Ն որոշմամբ սահմանված է առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության մարդու կյանքին սպառնացող վտանգի դեպքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու կարգը, որի 2-րդ կետի համաձայն՝ առանց համաձայնության բժշկական օգնություն և սպասարկում տրամադրվում են մարդու կյանքին սպառնացող վտանգը վերացնելու նպատակով, եթե պացիենտի առողջական վիճակը հնարավորություն չի ընձեռում տալու համաձայնություն, կամ նման համաձայնություն չի տրվում, կամ բացակայում են պացիենտի օրինական ներկայացուցիչը կամ պացիենտի կոնտակտային անձը, կամ վերջիններս համաձայնություն չեն տվել: Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրենքի նախագծի 3-րդ հոդվածը առաջարկում ենք շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «***Հոդված 3.*** Օրենքի 6-րդ հոդվածի՝ 1) 1-ին պարբերությունում «համաձայնությամբ» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքով սահմանված բժշկական միջամտության համար համաձայնություն տալու		

			կարգավորումների համաձայն» բառերը. 2) 3-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել. 3) 4-րդ պարբերությունից հանել «միայն բացառիկ դեպքերում,» և «, իսկ սույն օրենքով սահմանված կարգով համաձայնության ստացումն անհնար է» բառերը:»		
2.	**ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ** («Համաձայն <<ԱԺ կանոնակարգ>> սահմանադրական օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, Ազգային ժողովում 29.02.2024 թվականին առաջին ընթերցմամբ ընդունված «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (*Կ-762-15.01.2024-ԱոՀ-011/0*) օրենքի նախագծի երկրորդ ընթերցման համար ներկայացված **բանավոր** առաջարկների»)	**««Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (*Կ-762-15.01.2024-ԱոՀ-011/0*) օրենքի նախագիծ**	Առաջարկում եմ նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «մշակելու» բառից հետո լրացնել «, պահպանելու և տեղափոխելու» բառերը: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Գործող օրենքի 4-րդ հոդվածում նախատեսված է փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ մշակելու կանոնների մասին լիազոր մարմնի կողմից կարգի մշակում: Չնայած նրան, որ գործող օրենքի 4-րդ հոդվածից բխող գործում է 2019 թվականի փետրվարի 1-ին Առողջապահության նախարարի N 04-Ն հրամանը, որտեղ տեղափոխման վերաբերյալ գործառույթներ կան, նպատակահարմար եմ համարում օրենքում փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ մշակելու կանոնների հետ միասին նախատեսել նաև դրանք պահպանելու և տեղափոխելու մասին լիազոր մարմնի կողմից կարգի մշակում:	Ընդունվել է: Նախագծում լրացվել է նոր հոդված (հոդված 3), որին հաջորդող հոդվածների համարակալումը համապատասխանաբար փոխվել է:	Ընդունվել է:
3.	**ԱՐՄԵՆՈՒՀԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ**	**Նախագծի հիմնավորում**	Առաջարկում եմ նախագծի հիմնավորումից հանել «Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին» կոնվենցիային (Օվիեդոյի կոնվենցիա) կատարված հղումը, քանի որ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի վավերացրել հիշյալ կոնվենցիան:	Ընդունվել է: Նախագծի հիմնավորումը խմբագրվել է:	Ընդունվել է: